

ԳՐԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Սեդա Տ. Օհանեան, Միջազգայր (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., Երեւան, 2020, 200 էջ:

Քաղաքակրթութեան բնօրրան եւ պատմական Միջազգայրի տարածքին ձեւաւորուած Իրաք քաղաք-պետութիւնը Հայաստանի սահմանակից եւ դրացի այն պետութիւններէն է, ուր հայերը տարբեր ժամանակներու կայք հաստատած են եւ քաղաքական ու մշակութային սերտ յարաբերութիւններ մշակած: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ աւելի քան երեք հազարամեակ Միջազգայրի շարք մը շրջաններու մէջ ձեւաւորուած են հայկական բնակավայրեր, որոնք երկարատեւ կեանք չեն ունեցած:

Սեդա Տաճատի Օհանեանի *Միջազգայր (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար* մենագրութիւնը վառ դրսեւորումն է Միջազգայրի տարածքին վաղնջական ժամանակներէն եւ յատկապէս միջին դարերէն մինչեւ ԻԱ. դար գոբյատեւող Իրաքի հայ գաղթօճախի պատմութեան:

Աշխատութեան մէջ, որ բաղկացած է 214 էջէ՝ ներածութիւն, չորս գլուխներ, եզրկացութիւն, յաւելում, անգլերէն եւ արաբերէն ամփոփումներ, օգտագործուած գրականութեան ցանկ եւ անուանացանկ, ներկայացուած են Միջազգայրի հայկական բնակավայրերու սկզբնաւորումը, ձեւաւորման նախադրեալները, միջին դարերէն մինչեւ Ի. դար, ապա հայ գաղթավայրի կազմաւորումը, իրաքահայ թեմերու (առաքելական, կաթողիկէ) սկզբնաւորումը, տնտեսական ու հասարակական կեանքը եւն.:

Շեղինակին աշխատանքը հիւսումնադրուած է՝ հայ մատենագիրներու, օտար ճանապարհորդներու թողած յուշագրութիւններու, ձեռագիր յիշատակարաններու, կայսերական հրովարտականերու, մամուլի, արաբերէն, անգլերէն եւ հայերէն հարուստ գրականութեան հիման վրայ: Նիւթերու եւ առկայ գրականութեան պատմական վերլուծութեան շնորհիւ հեղինակը կրցած է լուսաբանել Իրաքի հայերու հասարակական-քաղաքական, տնտեսական ու կրթամշակութային կեանքի ոլորտները, միաժամանակ անդրադարձ կատարել հայերու դերին, դիրքին, յատկապէս՝ արաբական խալիֆայութեան եւ Օսմանեան կայսրութեան շրջանին:

Իդէպ, Իրաքի հայերու նուիրումն այս աշխատութիւնը Օհանեանի առաջին մենագրութիւնը չէ: 2016ին Երեւանի մէջ լոյս տեսաւ անոր *Իրաքի հայ համայնքը 20րդ դարուն* գիրքը, զոր հրատարակած էր ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկը:

Այս նոր աշխատությունը նուիրում է Հայոց Յեղասպանութենէն վերապրած հեղինակի ծնողներու խնկելի յիշատակին:

Առաջին գլուխին մէջ՝ «Հայկական գաղութներու յառաջացումը Միջագետքի մէջ», հեղինակը կը խօսի պատմական Միջագետքի աշխարհագրական դիրքին եւ անոր անմիջական կապին՝ Հայկական Բարձրաանդակին, այնտեղ՝ հայերու եւ տարբեր ժողովուրդներու բնակութիւն հաստատելու մասին: Կատարում հետազոտական աշխատանքները յանգեցուցած են այն եզրակացութեան, որ այնտեղ 3000 տարի առաջ հայկական բնակավայրեր գոյութիւն ունեցած են, որոնք երկար չեն գոյատեւած «*Դէպքերու իբրեւ հետեանք, տեղէ տեղ փոխադրուած եւ երբեմն ալ լուծուած ու դարձեալ վերակենդանացած*»¹:

Ա. գլուխը շարադրելու ընթացքին հեղինակը օգտուած է Մարտիրոս Գաուրճեան, տորթ. Ամրը Սուլէյմանի, Աշոտ Աբրահամեանի, Հերոդոտոսի, Յակոբ Աթիկեանի եւ այլոց աշխատութիւններէն: Փորձած է փաստերով ապացուցել, որ տարածքին վրայ վաղնջական ժամանակներէն գոյութիւն ունեցած են ժամանակաւոր բնակավայրեր «հայկական գիւղեր», սակայն անոնք սակաւ են: Հեղինակը որոշակի տուեալներ կը հաղորդէ Սասանեաններու տիրապետութեան շրջանին Տիգրոն մայրաքաղաքի մէջ հայկական մեծ «*գաղթօճախի մը գոյութեան մասին՝ բաղկացած առեւտրականներէ, պետական պաշտօնեաներէ եւ պապանդներէ*»²:

Հեղինակը կ'անդրադառնայ Միջագետքի Դ.-ԺԷ. դարերու պատմութեան, Ապպասեան Խալիֆայութեան հիմնումին, միաժամանակ նշելով որ այդ ժամանակաշրջանին դէպի Միջագետքի տարածք հայերու նոր հոսք տեղի չէ ունեցած: Օհանեան համակարծիք չէ կարգ մը պատմաբաններու այն վկայութիւններուն, թէ հայեր չեն եղած արաբական այդ երկիրներուն մէջ: Ընդհակառակը, հեղինակը կը հիմնաւորէ թէ հայեր եղած են եւ արաբները երբեք հակառակ չեն եղած այդ երկիրներու հպատակներու կրօնքին, նիստուկացին եւ մանաւանդ տնտեսական մարզերուն մէջ ձեռք բերած յաջողութիւններուն: Այդուհանդերձ, զինուորական եւ վարչական բարձր պաշտօնները միայն ու միայն վստահուած են իսլամներուն, քանի անոնք իսլամներու մենաշնորհը կը նկատուէին:

Հեղինակը Միջագետքի հայաշատ բնակավայրերէն կը յիշատակէ գլխաւորաբար Պաղտատի հիմնադրութիւնն ու կ'անդրադառնայ հայերու գոյութեան փաստին: Այնուհետեւ կը խօսի Մուսուլի մօտակայքը գտնուող

¹ Սեդա Օհանեան Տաճատի, *Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար*, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., Երեւան, 2020, էջ 17:

² Օհանեան, էջ 21:

Արբելայի եւ Քարամլէի մէջ ձեւաւորուած հայկական համայնքներուն մասին:

ԺԷ. դարէն սկսեալ կը ստուարանայ Իրաքի հայերու թիւը: Գաղթավայրեր կը ձեւաւորուին Քերքուկի, Պասրայի, Մուսուլի, Էրպիլի եւ այլ վայրերու մէջ: Ուստի անհրաժեշտ կը դառնայ իրաքահայ թեմի կազմակերպումը, որուն մանրամասնօրէն կ'անդրադառնայ հեղինակը աշխատութեան երկրորդ գլխուն մէջ:

«Իրաքահայ թեմի կազմակերպումը» սկիզբ կ'առնէ ԺԷ. դարու առաջին կիսուն (1638): Բայց մինչեւ ԺԸ. դարու կէսերը Պաղտատի եւ Պասրայի հայոց հոգեւոր կեանքը կայուն ընթացք չէ ունեցած, որովհետեւ Պասրայի բնակիչներուն մեծ մասը ջուղայեցիներ ըլլալով կապուած եղած են Ջուղայի առաջնորդութեան, իսկ Պաղտատը՝ Էջմիածինին: Կաթողիկոսական կոնդակներու, ձեռագիր յիշատակարաններու եւ այլ վկայութիւններու հիմնուելով, հեղինակը կը փորձէ եզրայանգում կատարել տուեալ ժամանակահատուածի թեմի գոյութեան մասին:

Բ. գլուխի, յաջորդ ենթահատուածով, հեղինակը կը ներկայացնէ հայ կաթողիկէ համայնքի կազմաւորման նախադրեալներն ու յետագայ գործունէութիւնը:

Կաթողիկէ հայրերու ներկայութիւնը Իրաք կը յիշատակուի ԺԷ. դարու քսանականներէն՝ Կարմէղեան լատին վարդապետներու մուտքով: Հուսկ, Քափուչիներէն քարոզիչներէն մին կը յաջողի դաւանափոխ ընել նեստորականներէն, հայերէն եւ յակոբիկեաններէն որոշ խաւ մը: Քարոզիչները իրենց ուսմունքը տարածելու համար կ'որդեգրեն լուսաւորութեան միջոցը, կը հիմնեն դպրոց, որ հետզհետոյ յաջողութիւն կ'արձանագրէ եւ կը նպաստէ կաթողիկէ փոքր համայնքի մը ձեւաւորման, որ կորիզը պիտի հանդիսանար Իրաքի մէջ կաթոլիկութեան տարածման: Կաթոլիկութիւն դաւանած փոքրամասնութիւնը կ'ենթարկուի բազմաթիւ դժուարութիւններու: 1833ին Բ. դռան հրովարտակով պաշտօնապէս կը հաստատուի անոնց գործունէութիւնը: Իդէպ, Ի. դարու սկիզբը համայնքը կը հաշուէր 1000 շունչ:

Այս բաժինին մէջ անդրադարձ կայ նաեւ համայնքի եկեղեցիներու, Իրաքի հայոց գերեզմանատուներու, որոնք ապացոյց են հայ բնակչութեան եւ կազմաւորուած համայնքի գոյութեան:

Օհանեան երրորդ գլուխը վերնագրած է «Տնտեսական, հասարակական գործունէութիւն», ուր կը խօսի իրաքահայութեան տնտեսական եւ հասարակական գործունէութեան մասին: Միջագետքը իր աշխարհագրական դիրքով, հանդիսանալով արեւելքն ու արեւմուտքը կամրջողը, միշտ ալ տարբեր դարաշրջաններու գերտէրութիւններուն ախորժակը սրած է:

Այդ է պատճառը, որ ան «միջնադարեան եւ արդի առեւտրապահպանական պայմանութեան մէջ իր ուրոյն տեղն ունի»³ կը գրէ հեղինակը:

Սակայն, հեղինակին համաձայն, իրաքահայերը տնտեսական աշխուժ գործունէութիւն սկսած են ծաւալել ժ.Ե. եւ յատկապէս ԺԸ. դարու սկիզբը, երբ Պարսկաստանի մէջ յառաջացած քաղաքական աննպաստ պայմաններուն պատճառով Պասրա եւ Պաղտատ ապաստանած հայ վաճառականները կամ իրենց գործակալները աշխուժ գործունէութիւն ունեցած են: Այս պիտի տեսնէք մինչեւ ԺԹ. դար:

Առեւտրատնտեսական կապերու շնորհիւ զարկ պիտի տրուէր քաղաքաշինութեան, մանաւանդ՝ Պաղտատի, Պասրայի, Մուսուլի, միաժամանակ պիտի ձեւաւորուէին նոր քաղաքներ:

Հասարակական գործունէութեան առումով, հեղինակը կը նշէ, որ մինչեւ ԺԹ. դարու առաջին կէտը, հասարակական գործունէութիւն համարեալ բացակայած է: Բայց գաղթավայրի հայ երեւելիները յուժ կարեւոր համարած են եկեղեցիները բարեկարգելու եւ բարեզարդելու գործունէութիւնը: Այս կը խօսի այն փաստի մասին, որ Իրաք վերջնականապէս հաստատուած հայերու մօտ սկսած էր ձեւաւորուիլ ինքնուրոյն ապրելու եւ իրենց համայնքը անկախ տնօրինելու գաղափարը: Վերոնշեալ իրավիճակը փոփոխութեան կ'ենթարկուի յատկապէս 1876ին, երբ Պաղտատ կը ժամանէ բազմավաստակ մանկավարժ եւ լեզուագէտ Միհրան Սվաճեան, որուն առաքելութեան գլխաւոր առանցքը ազգային դպրոցի մակարդակի բարձրացումն էր՝ հիմք ունենալով նոր եւ գիտական մատուցման ու կիրառման եղանակներ. ասոնց արդիւնքը կ'ըլլայ Ասքանազեան ընկերութեան հիմնումն:

Չորրորդ գլուխը հեղինակը նուիրած է համայնքի «Կրթամշակութային կեանք»ին, ուր համապատասխանաբար ներկայացուցած է հայ առաքելական եւ կաթողիկէ դպրոցները, ինչպէս նաեւ այդ կրթօճախները յաճախած աշակերտութեան թիւի վերաբերեալ տուեալներ, որոնցմով կ'ուրուագծուի ժամանակի հայութեան տեղն ու դերն Իրաքի մէջ:

Գաղտնիք չէ, որ պետականութենէ զուրկ հայ ժողովուրդը, գտնուելով եկեղեցւոյ հովանիի ներքոյ, իր կրթարանները կառուցած է եկեղեցւոյ կից կամ շրջափակին մէջ, ուր կրօնագիտութեան կողքին ասանդուած են աստուածաբանութիւն եւ լեզուներ, որոնք կը նպատակադրէին պատրաստել վաղուան հոգեւորականը, վարժապետը:

Դպրոցներու աստիճանական զարգացումով եւ հասարակութեան պահանջքը լրացնելու նպատակով կը հիմնուին կրթական անկախ «օճախներ», որոնք կը կիրարկեն ուսուցման նոր եղանակներ: Այդպիսի դպրոցներ կը յառաջանան Պաղտատի եւ Մուսուլի վիլայէթներու մէջ:

³ Նոյն, էջ 106:

Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին օտար պետութիւններու նիւթական աջակցութեամբ ու հովանաւորութեամբ, յատկապէս մեծ քաղաքներու մէջ կը բացուին օտարազգի դպրոցներ, որոնց առկայութեամբ ուսուցման ձեւի ու եղանակի մէջ փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Ծնունդ կ'առնեն աշխարհիկ դպրոցներ: Միսիոնարներու գործունէութիւնը տարածաշրջանին մէջ կը փոխէ դպրոցներուն կարգավիճակը: Միսիոնարները, որոնք ուղղակի կամ անուղղակի կը սատարէին բողոքականութեան եւ կաթոլիկութեան, իրենց քարոզչական աշխատանքները կը կերտեն առաւելաբար քրիստոնէական միջավայրի մէջ, որմէ զերծ չէին հայ առաքելական եկեղեցւոյ զաւակները⁴:

1860ականներու վերջաւորութեան Օսմանեան կայսրութիւնը «*կանոնակարգում*»ի եւ «*Ընդհանուր կրթական կանոնադրութեան*» ճանապարհով կը սահմանափակէր «*քրիստոնէական, տեղացի, եւ օտար ոչ-իրաքեան*» սեփական դպրոց բանալու իրաւասութիւնը, առանց տուեալ վիլայէթի վալիի արտօնութեան, կը պահանջէր ուսուցիչի վկայուած ըլլալու փաստաթուղթ ու դասաւանդուող նիւթերու մասին հաղորդումը՝ իշխանութեան պատկան մարմիններուն: Իսկ 1875ին Բ. դուռը «*իրեն պիտի վերապահէր արտօնութիւն տալ որեւէ դպրոց բանալու եւ շար աւելի խիստ պայմաններով*»⁵:

Քրիստոնեաներու դպրոցներու նիւթականը կը հոգային համայնքի երեւելիները հանգանակութեան կամ նուիրատուութեան ճանապարհով: 1885ին պետականօրէն կ'արգիլուի դպրոցաշինութեան եւ եկեղեցաշինութեան նպատակով դրամահաւաքը, որով որոշ դպրոցներ փակման կը դատապարտուին կամ ժամանակաւորապէս կը դադրին գործել:

Օհանեան կը նշէ, որ քրիստոնեայ համայնքներու դպրոցները ունէին առանձնայատկութիւններ, օրինակ՝ տուեալ համայնքի լեզուի ուսուցման կողքին կը դասաւանդուէր այլ լեզու մը, ինչպէս՝ քաղղէական դպրոցներու մէջ քաղղերէն լեզուին համատեղ՝ արաբերէնը, որ կ'ուսուցանուէր տեղացի քրիստոնեայ ուսուցիչներու կողմէ, բայց եւ այնպէս պետական լեզուն թրքերէնն էր, որ պարտադիր էր բոլորին⁶:

Այս գլուխին մէջ հարուստ տեղեկութիւններով անդրադարձ կայ իւրաքանչիւր համայնքի դպրոցներու պատմութեան, ուսուցչական կազմերու, աւանդուող դասանիւթերու եւ լեզուներու վերաբերեալ: Հեղինակին ընդգծումով՝ հակառակ տիրող քաղաքական անպաստ պայմաններուն, ԺԷ դարու վերջերը Պաղտատ արդէն դարձած էր Մերձաւոր Արեւելքի հայ գրչութեան օճախներէն մէկը, ուր գրուած եւ մանրանկարուած են շարք մը

⁴ Նոյն, էջ 128:

⁵ Նոյն, էջ 129:

⁶ Նոյն, էջ 130:

ծեռագիրեր⁷: Տպարանի ու մամուլի վերաբերեալ տեղեկություններ նաեւ տեղ գտած են աշխատութեան մէջ:

«Եզրակացութիւն» բաժինին մէջ հեղինակը կ'արժեւորէ համայնքին դերը երկրի բարգաւաճման եւ առեւտրատնտեսական զարգացման մէջ: Անգամ մը եւս կը խօսի այդ տարածքին վրայ հայկական բնակավայրերէն դէպի հայ համայնք ձեւաւորման փուլերու եւ թեմի կազմաւորման, անհրաժեշտութեան ու դերին մասին:

Աշխատութեան կարեւոր արժանիքներէն են թիւով 21 «Յաւելուած»-ները, որոնք կը վերաբերին տարբեր վաւերագրերու, մշակութային որոշ յուշարձաններու:

Եզրակացնելով, Սեդա Տ. Օհանեանի սոյն մենագրութիւնը՝ նուիրուած Իրաքի վաղնջական ժամանակաշրջանի պատմութեան, ունի ոչ միայն գիտական, այլեւ քաղաքական նշանակութիւն, որովհետեւ ինչպէս անցեալին, այնպէս ալ վերջին տասնամեակներուն տարածաշրջանին մէջ ընթացող ու անաւարտ մարտերը, բնակչութեան բռնի տեղահանութիւնն ու գաղթը անգամ մը եւս կու գան հաւաստելու այդ տարածքի ռազմավարական նշանակութիւնն ու մեծ տէրութիւններու գերնպատակները: Ուստի, պատմութեան համապարփակ ուսումնասիրութիւնը ունի գիտական մեծ կարեւորութիւն եւ այժմէականութիւն:

Աշխատութիւնը կարեւոր ներդրում է հայ գաղթավայրերու, Սփիւռքի հայկական համայնքներու պատմութեան նուիրուած յատուկ դասընթացքներուն եւ մասնաւորապէս Իրաքի հայ համայնքի պատմութեան բազմակողմանի ուսումնասիրութեան համար:

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ (fishenkjianani@outlook.com)

⁷ Նոյն, էջ 144: Այս մասին տե՛ս նաեւ՝ Գայիանէ Պօղոսեան, «Պաղտատում գրուած բժշկական բնոյթի ժողովածու», *Իրաքի Հայերը. գիւրաժողովի նիւթեր (29-31 Մայիս 2017)*, խմբ. Ա. Տազէսեան, Հայկազեան համալսարանի հրատ., Պէյրութ, 2021, էջ, 39-50: